# ՍԻՕՆ

## ԱՄՍԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀՐԶԱՆ ՄԻԱՄՆԵԱՅ



ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
1872

digitised by A.R.A.R.@



# ՍԻՕՆ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 2.

ԱՄՍԱԳԻՐ

ՓԵՏՐՎԱՐ 29.
1872.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

## ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ
## ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
### Ի ՄԱՍԻՆ
### ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԵՒ ԹԵՄԱԿԱՆ ԽՆԴՐՈՅ
### ԵԳԻՊՏՈՍԻ

Սուրբ Աթոռս, Եգիպտոսի կալ-
ուածական և Թեմական խնդրոց ծագ-
ման առաջին օրէն 'ի վեր, փափաքե-
ցաւ ամեն զգուշութիւն և հնարա-
ւոր միջոց 'ի գործ դնել, որպէս զի
յիշեալ խնդիրներն լուծուին առանց
գժտութեան և տարաձայնութեան.
սակայն չըյաջողեցաւ վայելել իւր
զգուշութեան և խաղաղասիրութեան
արդիւնքը։ Եղան մարդիկ, որք ոչ
միայն չըկամեցան տեսնել միաբա-
նական Ուխտիս խաղաղասէր վար-
մունքն, այլ և Նախագահէն սկսեալ
մինչև յետին միաբանը, զրպարտե-
ցին իբրև անիրաւ, ամբաստանե-
ցին իբրև խռովարար, նախատեցին
իբրև փառամոլ, և ամեն անարգա-
նօք անարգեցին, որպէս զի իրաւանց
ձայնը լռեցնեն, արդարութեան աղա-
ղակը խեղդեն և ճշմարտութեան դա-
տը մահացնեն։ Նախատինքներն մա-
նաւորապէս Միաբանութեան վրայ կը
տեղային, բայց ի հարկէ Միաբանու-
թեան խնդրած ու պահանջած իրա-
ւունքն և նոյն իրաւանց արդիւնքն ու
պարծանքն ընդհանուր Ազգին էր և



digitised by A.R.A.R.@

անշուշտ Ազգային Վարչութեան մտադրութիւնն եւս գրաւած էր ։

Արդ Ազգային Վարչութիւնը պաշտօնապէս կը հաղորդէ այսօր իւր վերջին տնօրէնութիւնը Եգիպտոսի կալուածական և թեմական խնդրոյ մասին, և Ս. Աթոռս, թէև՛ ոչ առանց զոհողութեան, սիրով կը վիճանի ընդունիլ զայն և փութալ գործադրել ինչ որ իրեն կը վերաբերի ։ Ընդունի Ս. Աթոռս Ազգային Վարչութեան տնօրէնութիւնն, առանց անցեալ դժուարութեանց փոշիները մաղելու և իւր կողմէն նոր խռովութեան առիթ տալու ․ սակայն եթէ այսքան զիջողութենէն վերի Ազգային Վարչութեան որոշումներն չը յարգուին այլոց կողմէն, և Արշալոյս վերլրատին շտեմարան դառնայ անհիմն փաստաբանութեանց և վատահամբաւիչ զրպարտութեանց, անշուշտ Ս. Աթոռս եւս կը պարտաւորի, որպէս աւանդապահ ազգային նուիրական իրաւանց, իւր արդարոյ բողոքներն շարունակել, զոր այժմ կ'ընդհատէ Ազգային Վարչութեան տնօրէնութիւնը յարգելու և հրապարակայայտնելու, որ ինքն միշտ փափաքած է և կը փափաքի խաղաղութեան ։

Ահաւասիկ իբրև վկայութիւն սոյն հրապարակական յայտարարութեան կը հրատարակենք թէ Ազգային Վարչութեան Պաշտօնական Գիրն, թէ Գերապատիւ Մեսրոպ եպիսկոպոսին տուած Հրահանգն և թէ Ս. Աթոռս Նախագահի կողմէն առ եգիպտաբնակ սիրելի վիճակայինս ուղղուած Կոնդակն ։

---

ԴԻՒԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Թիւ, 1412.

Ամենապատիւ Տ. Տ. Եսայի Սրբազան Արքեպիսկոպոս, Բարեխնամ Պատրիարք Ս. Աթոռոյն Երուսաղեմայ ։

Ամենապատիւ Սրբազան Եղբայր 'ի Քրիստոս ։

Հարկ չէ ըսել թէ Ազգ. Վարչութիւնը Ս. Աթոռոյդ և Եգիպտոսի մէջ ժամանակէ մը 'ի վեր ծագած անհամաձայնութիւնները չէր կրնար անտարբեր աչօք նկատել, երբ մէկ կողմէ Ձեր Սրբազնութիւնը Ս. Աթոռոյդ կալուածական և թեմական իրաւունքներն յիշեալ վիճակին մէջ վտանգի ներքև տեսնելով կը բողոքէր և իւր իրաւանց պաշտպանութիւնը կը պահանջէր, երբ միւս կողմէ ալ Եգիպտաբնակ ժողովուրդն իւր Ազգ. Սահմանադրական իրաւունքն յառաջ բերելով Գեր. Մեսրոպ եպիսկոպոսի առաջնորդական ընտրութեան վաւերացումը կը պահանջէր, արդարև Ազգ. Վարչութեան ուրիշ բան չէր մնար, բայց եթէ ամեն ջանք 'ի գործ դնել երկու կողման իրաւունքներն ալ գոհ ընելու եղանակաւ յիշեալ խնդիրներն լուծելու, որով կարելի ըլլար համաձայնութիւնը վերահաստատել Ս. Աթոռոյդ և Եգիպտոսի մէջ ։ Այս նպատակաւ Ազգ. Վարչութիւնը յիշեալ Եպիսկոպոսին և Արժ. Աստուածատուր վարդապետին մէջ անցեալ տարուան պատահած ծանր վէճը քննելու համար Ձեր Սրբազնութեան ըրած բողոքներուն վրայ փութաց յիշեալ եպիսկոպոսը մայրաքաղաքս կանչելու, և այս անձնական վէճին քննութեան հետ՝ մի-

digitised by A.R.A.R.@

անդամոյն լուծել Եղուսադէմայ և Եգիպտոսի մէջ առկախ մնացած խնդիրները։ Ուստի յիշեալ եպիսկոպոսը մայրաքաղաքս գալէ 'ի վեր Ազգ․ Վարչութիւնն ամեն ջանք 'ի գործ դըրաւ յիշեալ խնդրոց լուծման մը տալու։ Մեսրոպ եպիսկոպոսի և Աստուածատուր վարդապետի անձնական վէճին թէև բաւական ժամանակ քննութեամբ զբաղեցուց զԱզգ․ Վարչութիւնը, բայց հուսկ ուրեմն հաշտարար եղանակաւ զայն վերջացնել յաջողեցանք, և հարկ չեմք համարեր այժմ անոր պարագաներուն վրայ մանրամասնութեանց մէջ մտնել, որովհետեւ երկուքն ալ կատարեալ սիրով հաշտուեցան միմեանց հետ, որով անցեալն մոռացութեան տակ թաղուելով կը յուսամք որ ապագային մէջ այսպիսի վէճերու տխուր փորձերը չեն նորոգուիր 'ի ցաւ սրտի Ձեր և Մեր առ հասարակ։

Իսկ կալուածական և թեմական խնդիրներուն գալով, Ազգ․ Վարչութիւնը առաջնոյն համար չը վարանեցաւ կանխաւ երկու կողմանէ կորգուած իրաւարար Յանձնաժողովին որոշումը վերահաստատել, որով արդէն Եղուսադէմայ Աթոռոյն պատկանեալ Եգիպտոսի մէջ գտնուած կալուածներին զատուած և անոնց եկամուտից հաւաքումը ու տնօրէնութիւնը Ս. Աթոռոյդ յանձնուիլը կարգադրուած էր, նոյնպէս և Աղէքսանդրիոյ մէջ գտնուած արտային բաժանումն եղած, բայց Աղէքսանդրիոյ եկեղեցւոյն պատկանեալ մասին՝ որու վրայ դառնալու կէտը միայն անոր մնալով՝ երկու կողման անհամաձայնութեան նիւթ դարձած էր։ Այս վերջին կէտին լուծումն այս անգամ Ազգ․ Վարչութիւնը իրեն վերապահել որոշեց, որպէս զի երկու կողման գժտութեան առիթ մը չը մնայ, որով Ազգ․ Վարչութիւնն այս մասին Ձեր սրբազնութեան հետ բանակցելէ ետեւ իւր տալիք վերջին որոշման գործադրութեան համար պէտք եղած մասնաւոր Հրահանգը Եգիպտոսի Ազգ․ Վարչութեան հաղորդելու հոգ պիտի տանի։ Հետեւապէս Ձեր Սրբազնութիւնը պէտք չունենալով այսուհետեւ ուղղակի միջամտել և բանակցիլ այս մասին Եգիպտոսի Ազգ․ Վարչութեան հետ, կրնայ ապահով լինել թէ Ազգ․ Վարչութիւնը իւր միջամտութեամբ պիտի փութայ օրինաւորապէս լուծել և վախճան տալ այս խնդրոյն։

Կալուածական խնդրոյն անօրէնութեան հետ Եգիպտոսի առաջնորդութեան խնդիրն ալ՝ որ նախորդ Վարչութեան օրէն կախ մնացած էր, լուծելու համար Ազգ․ Վարչութիւնը նկատելով որ մէկ կողմէն սահմանադրապէս ժողովրդեան ընտրութիւնը և միւս կողմէն Եղուսադէմայ Աթոռոյն թեմական իրաւունքը յարգել կը պարտաւորի, չը վարանեցաւ իւր այս կրկնակի պարտաւորութիւնը կատարել Մեսրոպ եպիսկոպոսի ընտրութիւնը վաւերացնելով, և պէտք եղած հրովարտակը Բ․ Դռնէն առնալով․ իսկ առաջնորդական կոնդակը Ձեր Սրբազնութեան վերապահելով։

Հարկ չէ ըսել թէ Ազգ․ Վարչութիւնը այն առաջնորդական խընդրոյ մէջ ստիպողական պատճառներէ շարժեալ խոհեմութիւն համարեց միայն այս անգամի համար բացառութիւն մը ընել Եգիպտոսի ժողովրդեան անզուսպ բաղձանաց համեմատ Գեր․ Մեսրոպ եպիսկոպոսի առաջնորդական պաշտօնն հաստատելով, առանց կանխաւ Ձեր Սրբազնու-

digitised by A.R.A.R.@

թեան համահաձութիւնն ստանալու, ինչպէս օրէն էր, վստահ ըլլալով որ այս պարագային մէջ Ձեր Սրբազնութիւնն ալ ներողամիտ կը գտնուի և կը փութայ Մեսրովպ Սրբազանի առաջնորդական կոնդակն ուղարկել, որով Ս. Աթոռոյ Թեմական իրաւասութիւնն անվթար պիտի պահպանուի. ինչպէս Ազգ. Վարչութիւնն այս կէտը ապահոված է այն պաշտօնական Հրահանգին մէջ, որ յատկապէս յիշեալ Եպիսկոպոսին յանձնըւեցաւ իր պաշտօնին պարտուպատշաճ գործադրութեան համար, և որոյ օրինակը ներփակեալ կը հաղորդեմք 'ի տեղեկութիւն Սրբազնութեանդ։

Ի վերջոյ նաև հարկ կը համարիմք ծանուցանել թէ հանգուցեալ Փարիս տիկնոջ կտակի խնդրոյն պատճառաւ ծագած անհամաձայնութիւնն ալ Ազգ. Վարչութեան ուշադրութենէն չը վրիպելով Գեր. Մեսրովպ եպիսկոպոսին առանձին ազդարարութիւն եղած է որ հանգուցելոյն ժառանգորդաց դատն ըստ օրինի տեղական իշխանութեան կողմէ, որուն յանձնուած է արդէն նոյն խնդիրը, որոշուելէ ետև՝ քըննութեան արդիւնքն անմիջապէս Ազգ. Վարչութեան հաղորդելով, պէտք եղած հրահանգն ստանայ և ըստ այնմ զարմանն 'ի գործ դնէ։

Ահա այսոքիկ են Ազգ. Վարչութեան ձեռք առած միջոցներն և ըրած վերջին որոշումներն 'ի մասին Ս. Երուսաղէմայ և Եգիպտոսի մէջ ծագած իրաւանց խնդրոյն, որոց գործադրութեան մէջ պիտի յաջողի Տէրամբ այն համաձայնութեան վերահաստատութիւնը, որ փափաքելի է տեսնել երկու կողման մէջ։ Կը յուսամք, ինչպէս Ձեր Սրբազնութեան հեռատես խոհեմութիւնը կ'երաշխաւորէ մեզ, որ պիտի ջանայք Ձեր կողմէ պէտք եղած օժանդակութիւնը նուիրել Ազգ. Վարչութեան որոշմանց այն կէտերուն գործադրութեան համար, որ Ձեր Սրբազնութեան կը վերաբերի, ապահով ըլլալով որ Ազգ. Վարչութեան ջանքը պիտի շարունակուին միշտ 'ի պաշտպանութիւն շահուց և իրաւանց Ս. Աթոռոյ, որ միանգամայն ընդհանուր Ազգին են։

Մնամք աղօթարար միշտ.
Պ. Կ. Մկրտիչ Արքեպիսկոպոս։

19 Յունվար 1872.
Ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պօլիս։

Գերապատիւ
Տ. Մեսրովբ Ս. Արքեպիսկոպոս
Բարեխնամ Առաջնորդ Եգիպտոսի

Համար 1409։

## ՀՐԱՀԱՆԳ

Եգիպտոսի և Աղեքսանդրիոյ ժողովրդեան Սահմանադրապէս ըրած ընտրութեան տեղեկագրերը Ազգային Վարչութիւնն ընդունելով՝ ըստ այնմ փութայ Ձեր Գերապատուութեան առաջնորդական պաշտօնը վաւերացնել և անոր հաստատութեան հրովարտակն այս անգամ Բ. Դռնէն ստանալով Ձեր գերապատուութեան յանձնելէ ետև՝ որոշեց առ այժմ Ձեր պաշտօնին պարտուպատշաճ գործադրութեան համար ներկայ Հրահանգը յանձնել Ձեզ։ Իսկ առաջնորդական կոնդակը թէ՛ ըստ Ս. Հարց աւանդութեան և թէ ըստ Սահմանադրութեան ուրկէց առնուլ որ հարկ է, 'ի վերջոյ անկէ պիտի ստանայք։

digitised by A.R.A.R.@

Ա. Երկար ատենէ 'ի վեր Ձեր վիճակին ժողովրդեան և Երուսաղէմայ Աթոռոյն մէջ ծագած ցաւալի անհամաձայնութեան գլխաւոր շարժառիթը կալուածական իրաւանց խնդրոյն վրայօք կանխաւ երկու կողմանէ կարգուած իրաւարար Յանձնաժողովոյն որոշման բառ մասին անգործադրելի մնալն եղած ըլլալով, Ազգային Վարչութիւնը որոշեց այս խնդրոյն վերջնական լուծումն իրեն վերապահել, այն պայմանաւ որ երկու կողմը ըզգուշանան առժամս որ և է միջամտութիւն մ' ընելէ, որպէս զի նոր դժուարութեան առիթ մը չծագի: Հետեւապէս թէ Ձեր Գերապատուութեան և թէ վիճակիդ Ազգ. Վարչութեան պարտաւորութիւնը պիտի ըլլայ Գահիրէի մէջ գտնուած Երուսաղէմայ Աթոռոյն վերաբերեալ կալուածոց և անոնց եկամտից հաւաքման մասին ուղղակի որ և իցէ միջամտութիւն մը չընել, միայն թէ երբ որ և իցէ պարագայի մը մէջ Ձեր Գերապատուութեան կը դիմեն, այն ատեն պարտաւոր էք պարտուպատշաճ խընամքն ու պաշտպանութիւնը մատուցանել Աթոռին փոխանորդին: Իսկ Աղեքսանդրիոյ արտային խնդրոյն համար յառաջագոյն եղած որոշման համաձայն Աղեքսանդրիոյ եկեղեցւոյն պատկանելոյ մասին որու վրայ դառնալն որոշելու խնդիրը Վարչութիւնը իրեն վերապահելով՝ Երուսաղէմայ Սրբազան Պատրիարքին հետ յատկապէս բանակցելէ ետեւ, պէտք եղած մասնաւոր հրահանգը Ձեր Գերապատուութեան պիտի հաղորդէ:

Բ. Ուրիշ առաջնորդական վիճակաց նման Ձեր վիճակին մէջ ալ Սահմանադրութիւնը գործադրել հարկ ըլլալով՝ պարտաւոր էք թէ Գահիրէի և թէ Աղեքսանդրիոյ Թաղ. Խորհուրդները՝ն և թէ օրինաւոր քուէարկութեամբ չեն ընտրուած և թէ պայմանաժամնին լրացած է, օրինաւորապէս վերակազմել: Նոյնպէս վիճակիդ Երեսփոխանական Ժողովը կազմելով՝ անոր միջոցաւ Քաղաքական Ժողով մ' ընտրել տալ եւ տեղեկագիրը Կեդրոնական Վարչութեան հաղորդել:

Գ. Առաջնորդական վիճակաց կողմէ 'ի նպաստ Կեդր. սնտուկին սահմանուած տարեկան մուքաթայի տրոց բաժինը իւրաքանչիւրին կարողութեան և արժանաւորութեան համեմատ որոշելու իրաւունքն Ազգ. Կեդրոնական Վարչութեան պատկանելով, անցեալ 1869 ին Խառն Ժողովը Ձեր վիճակին տարեկան մուգաթայի տուրքը 5000 ղուրուշի վերածելու որոշում ըրած էր:

Ազգ. Վարչութեան Քաղաքական Ժողովը թէ և այն յաւելեալ գումարը վիճակիդ կարողութեան հետ բաղդատելով թեթեւ կը գտնէ, բայց առ այժմ Նախորդ Վարչութեան վերոյիշեալ որոշումը վերահաստատել միայն պատշաճ համարելով Ձեր Գերապատուութեան կը յանձնէ որ նոյն յաւելեալ տուրքն իւր նախորոշման թուականէն արձանագրել տալով, մինչեւ ցարդ անվճար մնացածը վճարելու և այսուհետեւ ալ նոյնպէս շարունակելու ջանադիր գտնուիք մինչեւ ցնոր տնօրէնութիւն:

Արդ՝ Ազգ. Վարչութիւնը անտարակոյս է որ Ձեր Գերապատուութիւնը այս Հրահանգն 'ի ձեռին ունենալով՝ իւր առաջնորդական պաշտօնը խաղաղութեամբ 'ի գործ դնելու եւ Երուսաղէմայ Աթոռոյն ու Եգիպտոսի ժողովրդեան մէջ նոր դըժուարութիւններ չծագելու մասին ջանադիր պիտի գտնուի և Ազգ. Վարչութեան հետ իւր գրաւոր յարաբե-

digitised by A.R.A.R.@

բութիւնները յարատեւ պիտի շարունակէ ։

Մնամք աղօթարար

(Ստորագրութիւն Ս. Պատրիարքի)

19 Յունուար 1872
Ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պօլիս ։

---

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ տէր Եսայի արքեպիսկոպոս եւ շնորհիւ ամենատուր Հոգւոյն Պատրիարք առաքելական սուրբ Աթոռոյս Երուսաղէմի և վերատեսուչ սուրբ և տնօրինական տեղեացն Քրիստոսի, յորմէ հասցէ շնորհք և օրհնութիւն ՚ի վերայ տիրանուէր վիճակին Եգիպտոսի ուղղակրօն վարդապետաց, շնորհազարդ քահանայից և համօրէն ՚ի Քրիստոս հաւատացելոց բարեպաշտ ժողովրդոց, մեծաց և փոքունց, սիրելի որդւոց մերոց ՚ի Տէր ։ Աղօթեմ առ բարձրեալն Աստուած վասն Ձեր ամենեցուն կալ մնալ միշտ ՚ի շնորհս նորա, ՚ի ճշմարիտ կրօնս աստուածպաշտութեան, ՚ի քրիստոնէական ուղղափառ հաւատս Հայաստանեայցս առաքելական սրբոյ Եկեղեցւոյ, ՚ի սէր և ՚ի միութիւն Աւետարանին խաղաղութեան, ՚ի ջերմեռանդն աստուածսիրութեան և յեղբայրսիրութեան, և այն ունիլ երանելի յուսոյն և յայտնութեան փառացն հանդերձելոց, զոր պատրաստեալ է Տէր, որոց սիրեն զնա, երկնչին ՚ի նմանէ և պահեն զպատուիրանս նորա ։

Եւ ընդ տիրանուէր սուրբ ողջունիս և աստուածային օրհնութեանս՝ այսու պատրիարքական կոնդակաւս յայտ առնեմք համօրէն սիրելի որդւոցդ մերոց՝ բնակչաց ՚ի տիրախնամ թեմիդ Եգիպտոսի ։

Ըստ խնդրանաց բարեպաշտ վիճակայնոցդ և ըստ վերջին տնօրէնութեան և որոշման Ազգային բարեխնամ Կեդրոնական Վարչութեանն Կ. Պօլսոյ վաւերացուցանեմք ահա այսու մերով օրհնութեան կոնդակաւ զառաջնորդութիւն Գերապատիւ սիրելի եղբօր մերոյ Տ. Մեսրոպայ արքեպիսկոպոսի և պատուէր տամք հոգեւոր և շնորհատուն զաւակացդ սրբոյ Եկեղեցւոյ ընդունիլ զնա որդիական սիրով և աստուածահաճոյ ակնածութեամբ ։ Աղաչեմք զձեզ, ըստ Առաքելոյն, ճանաչել զնա որպէս վաստակաւոր, վերակացու և խրատիչ ձեր ՚ի Տէր և արժանի համարել զնա առաւել սիրոյ վասն գործոյ իւրոյ. քանզի գիտեմք աներկբայ, զի և նա բազում աշխատութիւնս ունի կրել վասն ձեր ։ Աւասի՛ք, սիրելի որդեակք, կալ հաստատ ՚ի խաղաղութեան Աւետարանի, ընտրել ձեզ ըզհետս բարի յամենայն ՚ի բանս և ՚ի գործս ձեր, աջակից լինել Գերապատիւ Առաջնորդին ձերոյ ՚ի հանրաշահ ձեռնարկութիւնս, յաստուածահաճոյ գործառնութիւնս և յարդիւնաբեր ջանս և ՚ի վաստակս ։ Վասն զի այբ իւր ամենայն բարեաց և յառաջադիմութեան օժանդակութիւնն ճանաչի և սէրն փոխադարձ ։ Իսկ ընդհակառակն, ուր չէք աջակցութիւն հովուին և հօտին, ուր տիրէ ատելութիւն երկպառակութեան, ուր արձակ համարձակ գլուխ ամբառնայ եսութիւնն ազգակործան, ուր յաճախեն անիրաւութիւնք, զրկողութիւնք, շահախնդրութիւնք, սուտ բարեպաշտութիւն և կեղծ մարդասիրութիւն, ուր մուտ գործեն այ[illegible] չարիք, անդէն խաւարն անդի-

digitised by A.R.A.R.@

տութեան սիրէ 'ի միտս և 'ի սիրտս, խորհուրդք ապականին՝ զգացմունք վատթարին, զօրութիւն բարոյական սպառի և կեանքն հասարակաց մահանայ կենդանւոյն: Դուք, ծոցածին զաւակունքդ Հայաստանեայց Առաքելական սուրբ Եկեղեցւոյ, դուք արարածք էք ամենազօրին Արարչին և հօտ՝ գնեալ արեամբ Գառին Աստուծոյ: Դուք որդիք էք լուսոյ և որդիք տունջեան, զգուշացարո՛ւք չանկանիլ 'ի քնով, այլ լինիլ արթունս և զուարթունս 'ի ճանապարհի ճշմարիտ աստուածպաշտութեան և 'ի շաւիղս անաղօտ լուսաւորութեան: Գիտասջիք, զի բարօրութիւն ազգաց և երջանկութիւն ժողովրդոց 'ի քրիստոնէական իմաստութեան և 'ի կենցաղօգուտ քաղաքակրթութեան և եթ կայանայ: Արդ լցուցէք ուրեմն զգիտութիւն կամաց Տեառն ամենայն իմաստութեամբ և հոգեւոր հանճարով, յամենայն գործս բարութեան պտղաբերք և գիտութեամբն Աստուծոյ աճեցուցէք: Մի՛ ստէք միմեանց, այլ զճշմարտութիւն խօսեցարո՛ւք իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում, զի էք միմեանց անդամք: Կացէք կատարեալք և լցեալք յամենայն կամս Աստուծոյ և զգոյշ լերո՛ւք, զի մի ոք ընդ ձեզ կողոպտիցէ ճարտարմտութեամբ և սնոտի խաբէութեամբ: Ջան գործեցէք մանաւանդ սնուցանել զմանկունս ձեր 'ի բարիս դաստիարակութեան և 'ի կրթութեան, զի իմաստութեամբ զարգացեալք և գիտութեամբ ճոխացեալք, լիցին պարծանք Եկեղեցւոյ, պարծանք Ազգի և պարծանք համօր մարդկութեան:

Բաղձայս եմք և փափաք, զի յայսմ ամենայնի առաջնորդ և գործակից լիցի սիրելեացդ՝ գերապատիւ եղբայրն մեր 'ի Տէր՝ Մեսրոպ սրբազան արքեպիսկոպոս, որում վիճակեցաւ հովուական տեսչութիւն սիրախնամ վիճակիդ: Բաղձայս եմք, զի յարգեսցէ նա զօրէնս Աստուծոյ զաւանդութիւնս Եկեղեցւոյ, զՍահմանադրութիւն Ազգին և զիրաւունս Ս. Աթոռոյս և յամենայն ձեռնարկութիւնս իւր պատկառ կացցէ կամացն Աստուծոյ, առաքելական տեսչութեան Ս. Աթոռոյս և տնօրէնութեանց Ազգային Վարչութեան: Մխիթարեսցէ և հաստատեսցէ զտկարացեալսն 'ի հաւատս, պաշտպանեսցէ զիրաւունս զրկելոց և տառապելոց, օգնական լիցի որբոց և այրեաց, խրատեսցէ զստահակս, պատսպարան լիցի տկարաց, քաջալերեսցէ զբարեբարոյսն և զառաքինագործսն, սաստեսցէ խռովասիրացն և խրախուսեսցէ զխաղաղասէրսն, բարձցէ զարմատս ամենայն երկպառակութեան և ատելութեան, փարեսցի համաձայն որոշմանց Սահմանադրական վարչութեանց և արասցէ զխաղաղութիւն, զարդարութիւն և զսէր, որ է գլուխ պատուիրանին Քրիստոսի և զօդ կատարման:

Այս են տեսչական պարտիք Գերապատիւ եղբօր մերոյ, զորս փափաք եմք թէ կատարեսցէ փութաջան սիրով, և կենդանի օրինակաւ անձինն հաճեսցէ և համոզեսցէ զմիտս ամենեցուն 'ի ճշմարիտն, 'ի բարին և 'ի կատարեալն:

Իսկ մեք աղօթս առնեմք վասն ձեր հանապազ, զի զյետոյսն մոռացեալ 'ի յառաջագոյնսն նկրտեսջիք, և ըստ Առաքելոյն գեղեցիկ պատուիրանի, “Որ ինչ ճշմարտութեամբ է, որ ինչ արդարութեամբ, որ ինչ սրբութեամբ, որ ինչ սիրով, որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ քաջութեամբ, որ ինչ գովութեամբ, զայն

խորհիջիք » ։ Զի եղիջիք ճշմարիտ որդիք Աստուծոյ և որդիք Ազգին, և երեւեսջիք իբրեւ լուսաւորք յաշխարհի 'ի մէջ ազգացն, շուրջ զձեօք բնակելոց ։ Աղօթս առնեմք հանապազ զի լցուսջիք զխնդութիւն մեր, լինելով համաշունչք և միախորհուրդք 'ի կամս Աստուծոյ և յիրաւունս արդարութեան ։ Եւ մանաւանդ՝ մի ինչ ըստ գրգռութեան, և մի ինչ ըստ սնապարծութեան, այլ խոնարհութեամբ զմիմեանս լաւ համարել քան զանձինս և միով հոգւով և միով շնչով նահատակիլ 'ի հաւատս Աւետարանին, 'ի շինութիւն Եկեղեցւոյ եւ Ազգին, 'ի յառաջադիմութիւն ներկայի և ապագային, 'ի պարծանս առաջնոցն և յօրինակ յետագայից, 'ի մխիթարութիւն մարդկան և 'ի փառս և 'ի գովեստ Աստուծոյ, որոյ խաղաղութիւնն ցանկալի, որ 'ի վեր է քան զամենայն բանս և զխորհուրդս, պահեսցէ զսիրտս ձեր և զմիտս 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. ամէն ։

Տուեալ յամի Տեառն 1872 և 'ի 11 փետրվար ամսոյ, յԱռաքելական Աթոռն Ս. Յովհաննու, [illegible].

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

# ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

(Շարունակութիւն. տես թիւ 1.)

## ԳԼՈՒԽ Բ.

### Բորբոք ստամոքսաց և փորոտեաց ։

Ամենայն բորբոք ստամոքսաց կամ աղեաց է յոյժ վտանգաւոր, որ և պահանջի փութով խնամ տանիլ առողջութեան, քանզի բազում անգամ վերջանան խղխայթմամբ կամ տապականութեամբ 'ի չարաչար մահ.

### Պատճառք ։

Բորբոք ստամոքսաց յառաջ գայ յայնպիսի իրաց, յորոց պատճառի տապալական ջերմ 'ի ներքուստ, այսինքն 'ի ցուրտ և 'ի զովարար ըմպելեաց, յորժամ դեռ մարմինն 'ի սաստիկ կրթութենէ կամ 'ի ծանր վաստակոց երկար ձեմելոյ, վազելոյ, պարելոյ, և այլն, է կարի ջերմ և քրտնեալ, որով իսկոյն փակի ծակոտի մարմնոյն և խափանի արտաշնչութիւնն իսպառ ։ Նաև հնար է այնց պատճառիլ 'ի կծուութենէ մաղձի, կամ 'ի կծու և 'ի գրգռիչ ուտելեաց, 'ի փսխողական, 'ի լուծիչ և 'ի թունաւոր դեղոց՝ հնարելոց 'ի սուտանուն բժշկաց, 'ի յետադարձմանէ յօդացաւութեան, 'ի սաստիկ ցրտութենէ, յանկարծ կեցութենէ և 'ի կարծր կամ յանմարսելի իրաց մնացեալ 'ի ստամոքսի, որպիսի են՝ ոսկր կամ կուտ պտղոյ, և այլն ։

digitised by A.R.A.R.@

### Նշանք սոյն հիւանդութեան ։

Մխտացեալն 'ի սոյն հիւանդութիւն զգայ միշտ ցաւ և բորբոք 'ի ստամոքսն, ընդ նմին և անհնարին անհանգստութիւն և ճնշումն ։

Զարկ բազկացն է երբեմն թոյլ, երբեմն երագ և երբեմն լի և խիստ. փսխումն կամ խառնակումն ստամոքսաց. դժուարաշնչութիւն. սառն և մածուցիկ քրտունք, նուաղութիւն, ուռումն ստամոքսայ, առ որ 'ի հպելն զգացեալ լինի անդուրժելի ցաւ. և բռնական շարժումն մկանանց՝ են հետեւանք սոյն հիւանդութեան ։

Եւ յորժամ հիւանդն զոր ինչ ուտէ և ըմպէ, փսխէ արտաքս, զգայ անհանգստութիւն, հեծկլտայ միշտ, ոտքն ուռին, զարկ շնչերակացն սաստկանայ, և օր աւուր սկսանի նուաղիլ, ահա հասեալ է վտանգն կենաց ։

Մին 'ի հաստատի նշանաց վտանգի այսր հիւանդութեան է յորժամ հիւանդն ուտէ կամ ըմպէ ինչ, յատկապէս յորժամ իցեն այնք կարի սառն կամ կարի ջերմ, զգայ սաստիկ ցաւ ստամոքսի ։

### Զգուշութիւն ։

Պարտ է հիւանդին ամենայն զգուշութեամբ 'ի բաց կալ յամենայն կծուական, ջերմաբնոյթ և գրգռիչ կերակրոց և ըմպելեաց ։

Եւ վասն նուաղութեան մի տացի երբեք զօրացուցիչ ըմպելի ինչ, որպիսի են օղի, գինի կամ այլ համեմեալ ջերմաբնոյթ ինչ. և մի փոխողական դեղ, որ կարի վնասակար է, և գուցէ պատճառէ եւս երբեմն զմահ ։

Կերակուր նորա պարտ է լինել միշտ թեթեւ, նիհար, թոյլ, զովարար և դիւրամարս. բայց կարի սակաւ, և ոչ կարի սառն կամ կարի ջերմ ։

Ւ

Պատշաճ կերակուր այսպիսի հիւանդի պարտ է լինել փոխինդ, արարեալ 'ի մաքրեալ գարւոյ կամ ալեր վարսակի. կամ սագոն և արարուտ կաթամբ եփեալ, թեթեւ խորովեալ հաց և լուծեալ 'ի ջերմ ջուր կամ յարգանակ վառեկի, և մեղմ բանջարեղէնք՝ այսինքն սպանախ, շողգամ, կաղամբ, փրփրեմ, շամին և այլն, եփեալ կաթամբ առանց իւղոյ. Իսկ ըմպելիք նորա պարտ է լինել մաքուր շիճուկ կաթին, եփուած արմատոյ տղտի. սարսափիլայ. կամ այլ կակղացուցիչ բանջարաց ։

### Դեղ ։

Մտէպ ստածումն 'ի վերայ ստամոքսոյ զաղջ ջրով կամ եփուածով մեղմ դալարեաց յոյժ օգուտ տացէ. այսինքն ընկղմեսցի կտոր մի ֆլանելոյ 'ի ջերմ ջուր կամ յեփուած դալարեաց, և դնիցի 'ի վերայ ստամոքսոյն, զոր և 'ի բաց առնել պարտ է՝ յորժամ սկսանիցի սառիլ, որոց և չէ պարտ լինիլ կարի ջերմ և ոչ թողուլ իսպառ սառիլ ։

Նոյնպէս և պարտ է զոտն և ըզձեռսն դնել 'ի ջերմ ջուր, կամ ջերմ ջրով լուանալ, կամ ջերմացուցեալ կղմինդր, քար, աղիս կամ խիւս բրնձի կամ գարւոյ կապել ընդ ներբանս ոտից. որ ոչ սակաւ օգտէ սոյն հիւանդութեան ։

Իսկ ներքին դեղ միայն օգտակար և բարեգոյն է գրեխն, արարեալ ջերմ ջրով, կամ խառնեալ 'ի նա երբեմն փոքր մի իւղ ձիթապտղոյ կամ մանա և մեղր ։



digitised by A.R.A.R.@

## ԳԼՈՒԽ Գ.

### Խօլէրամօրպուս կամ ախտ փորբերանի .

Այս ամենայն ուրեք ծանուցեալ դժնդակ ախտ փորբերանի փութով զրաւէ զմարդ 'ի կենաց, եթէ ոչ ըստ ժամանակին և ըստ արժանւոյն 'ի կիր առնուցուն զպատշաճ միջոց բժշկութեան .

### Պատճառ .

Այս մահաբեր ախտ պատճառի 'ի յորդութենէ ապականեալ և կըծուեալ մաղձոյ, 'ի կերակրոց, որք դիւրեաւ նեխին կամ թթուին 'ի ստամոքսի, հին և կծուեալ պանիր կամ կարագ, աղեալ կամ ծխեալ ապուխտ խոզի, երշիկ, նեխեալ ձուկըն, քաղցրաւենիք, կարկանդակ, քաքար, շօթ, պան, յօրինեալ աղցան 'ի քացախոյ, 'ի ձուոյ և յիւղոյ ձիթապտղոյ, փարունգ, սեխ, կեռաս և այլ խակ և հոլարնոյթ պտուղք . Նաեւ երբեմն պատճառի 'ի ներգործութենէ սաստիկ լուծողական փըսխողական և թիւնաւոր դեղոց . Նաև 'ի կարի սաստիկ վշտաց, և 'ի տարտամութենէ մտաց . յերկիւղէ և 'ի բարկութենէ, և այլն .

### Նշանք այսր հիւանդութեան .

Այս ախտ խմանի պրկցութեամբ սրտի, թթուալի ձգտմամբ և փըքախտութեամբ, հանդերձ ցաւով ստամոքսաց և փորոտեաց : Հուսկ ապա սկսանի լուծումն և փսխումն կանաչ, դեղին կամ գորշագոյն մաղձի, ընդ տարածման ստամոքսաց . ուստի հետեւի խիստ ցաւ, սաստիկ ծարաւ, երագ և անհամեմատ զարկ բազկաց, ցրտութիւն ոտից և ձեռաց, կծկումն մկանանց . մածուցիկ և տաւն քրտունք ընդ բոլոր մարմին հիւանդին :

Նշան մահուան այն հիւանդութեան է յորժամ հիւանդն ոչ կարէ միզել, զգայ սաստիկ բաղխումն սրտի, հեծկլտայ, նուաղի և ըմբըռնի 'ի բռնական շարժումն մկանանց :

### Օգնութիւն և դեղ .

Ի խափանել զվնասիչ պատճառս այսր հիւանդութեան՝ պարտ է նախ նըպաստել 'ի յառաջ վարել զլուծումն և զփսխումն՝ տալով հիւանդին ըմպել զլոյծ հեղուկս, այսինքն շիճուկ կաթին, ջերմ ջուր, ջուր փոխնդի, մակարդեալ կաթն, ընդ թթու կամ դառն լրայ կամ կարի թոյլ արգանակ վառեկի . և յայսպանէ զայն տացի յաճախ և սակաւ, որ առաւել յորդէ զփսխումն : Իսկ վասն լուծման որովայնի 'ի կիր առցի գրեխ ջերմ ջրով, արկեալ 'ի նա սակաւ ինչ աղ ժամն անգամ մի :

Զայսոսիկ առնելով 'ի քանի ժամս, ապա տացի հիւանդին ըմպել եփուած խորովեալ հացի կամ փոխնդի, առ յորդելու զփսխումն, զի եթէ այս ոչ օգնեսցէ, հարկ է տալ աղային ճալապ առ ժամն և դըգալաչափ խառնեալ 'ի նա 10 կաթիլ լօդանիում, և այնչափ մինչեւ դադարեսցի փսխումն :

Չէ պարտ ջանալ առ ժամայն խափանել զփսխումն և զլուծումն, մինչեւ յորժամ հիւանդն սկսանի լքանիլ 'ի զօրութենէ, յայնժամ հարկ է 'ի կիր առնուլ զվերոյիշատակեալ ճալապն, յոր և կարէ խառնել զօրեղ գինի կամ ոգի գարիանի և կամ այլ զօրացուցիչ դեղ ինչ .

Վասն այսր հիւանդութեան հնարեալ է 'ի բժշկաց խառնուրդ ինչ արարեալ 'ի մի սրուակ եփեալ ջրոյ, երկու բաժակ ընտիր օղւոյ, 30 չիթ

digitised by A.R.A.R.@

ոգւոյ պիպերմէնտի և 30 չիթ նեւս լաւդանիումի, յորմէ տալ է հիւանդին առ իւրաքանչիւր կէս ժամն դրգալ մի՝ փարատի։

Նաեւ պարտ է սակայ պահել զոտսն 'ի ջերմ ջուր և ծածկել փլանե-լով կամ սաւեղինօք, սառծել զստա-մոքսն ֆլանելով թացեալ 'ի ոգելից հեղուկս, որ ոչ սակաւ օգտէ սոյն հիւանդութեան։

Յորժամ սաստկութիւն հիւան-դութեանն անցանէ, չէ պարտ հի-ւանդին առ ժամայն առնուլ զընթացս իւր առաջին առողջ կեցութեան. այլ պարտ է զգուշանալ, զի մի կրկ-նեսցի այն, վասնորոյ հարկ է նմա յու-թըն կամ 'ի տասն աւուրս շարունակ 'ի կիր առնուլ յաւուրն երկիցս կամ երիցս անգամ 10 կամ 12 կաթիլս լաւ-դանիում, ընդ բաժակ մի ընտիր գին-ւոյ։

Իսկ կերակուր նորա լիցի միշտ սննդարար, դիւրամարս և յոյժ սա-կաւ. և առցէ յամենայն առաւօտ չա-փաւոր կրթութիւն հանդարտ քայլ-մամբ 'ի բաց օդի։

Այլ վասն նուազութեան աղեաց և ստամոքսայ՝ բարւոք է հիւանդին յաւուրս ինչ առնուլ դառն դեղօրայս ինչ ընդ գինւոյ, կամ զօրացուցեալ զայն ոգւով արջասպի, այսինքն վիտ-րիոլայ։

---

## ԳԼՈՒԽ Դ.

### Լուծողութիւն որովայնի.

Այս պակասութիւն յառաջ գայ 'ի խառնակեալ կամ յաղտեղի ստա-մոքսայ, յանմարսութենէ կերակրոց, 'ի պակասութենէ ազատ շնչման օդոյ և պատշաճ կրթութեան։

Նաեւ 'ի տրտմութենէ, յերկիւ-ղէ, յանձկութենէ սրտի, 'ի վշտաց և 'ի թաղձութենէ մտաց։ Նւս և 'ի գեր արգանակէ, 'ի պարարտ մսոյ, կամ 'ի դժուարամարս կերակրոց։

Արբեցն ևս 'ի կիրառութենէ յա-ճախ ոգելից և զօրաւոր ըմպելեաց, կամ թէյի, սուրճի, ծխախոտի, ա-փիոնի և այլն։

Վշտացեալն այսու հիւանդու-թեամբ որչափ և հնար է պարտ է ընտրել զբնակութիւն իւր չոր և օ-դաւոր տեղի, և յամենայն աւուր առնել զկանոնաւոր կրթութիւնս ձե-մելով, կամ հեծանելով 'ի ձի։ Կամ ե-թէ հնար է նմա՝ երթալ 'ի ճանապար-հորդութիւն ծովու կամ 'ի ցամաքի։

Նաեւ պարտ է նմա գլխաւորա-պէս փոյթ տանել 'ի բաց վարել յին-քենէ խռպա զտրտմութիւն, զեր-կիւղ և զթաղձութիւն մտաց, պահե-լով զինքն միշտ անդորր, խաղաղ և ուրախ։ Նոյն զգուշասցի իսկ 'ի սաս-տիկ ցրտութենէ, 'ի ջերմութենէ և 'ի վաստակոց։

Կերակուր նորա պարտ է լինել թե-թեւ, դիւրամարս և փոքրաքանակ. չիք այլ պատշաճ կերակուր վասն այսր հիւանդութեան, բայց միայն սա-գու, արարուտ, որիզ և մեղմ դալա-րիք եփեալ կաթամբ։ Նոյն ըմպելիք նորա միայն մաքուր և ցուրտ ջուր։

### Դեղ։

Վասն ախորժակի և մարսողու-թեան չիք այլ ընտրագոյն դեղ քան զոգի արջասպի, այսինքն էլէքսիր վիտ-րիոլայ, յորմէ 20 կամ 30 կաթիլս խառնեալ ընդ բաժակ մի գինւոյ կամ ջրոյ՝ առցի յաւուրն երկիցս կամ ե-րիցս անգամ։ Նաեւ կարէ առնուլ ստամոքսային ծանուցեալ դառն դե-

digitised by A.R.A.R.@

զօրայս ընդ ջրոյ կամ ընդ գինւոյ ։

Իսկ եթէ այս հիւանդութեան հետեւեսցի կորդութիւն որովայնի, կարէ յամենայն առաւօտ 'ի յառնելն 'ի քնոյ ազատօրէն առնուլ ըմպանակ մի հում կաթն կովու և առ ժամայն երթալ 'ի շրջել, որ մեծ օգուտ ընծայէ այս պակասութեան ։

Իսկ 'ի գլուխ ամենայնի՝ փոփոխութիւն բարեխառն օդոյ կանոնաւոր անխառն և թեթեւ կերակուր, պատշաճ կրթութիւն, ուրախ ընկերակցութիւն և զուարճալի զբօսանք են գերընտիր դեղ վնասեալ մարսողութեան և կարօտութեան ախորժակի ։

---

## ԳԼՈՒԽ Ե.

### Ախտ Լուծից կամ որովայնալուծութեան ։

Յաղագս բազում պատճառաց այս ախտ ոչ համարի իսկապէս հիւանդութիւն ինն, այլ միայն առողջարար արտաթորումն ։ Վասն որոյ չէ պարտ արգելուլ զայն, բայց միայն յորժամ կարի երկարի այն, կամ սկսանի ախտացեալն նուաղիլ ։

Զի որովհետեւ երբեմն պատահի ոմանց այս հիւանդութիւն, ոչ զնոյն արասցուք 'ի նշանակել աստ զկարի հասարակ պատճառս սոյն հիւանդութեան, ընդ նմին և զպատշաճ եղանակն վարելոյ զայն ։ Զի յորժամ այս որովայնալուծութիւն պատճառի 'ի ցրտութենէ, կամ 'ի յարգելմանէ արտաշնչութեան, պարտ է հիւանդին պահել զանձն ջերմ և ըմպել թեթեւալոյծ հեղուկս, այսինքն կամօմիլ և զայլ այսպիսիս ։ Զոտսն և զսրունս ստէպ դնել 'ի գաղջ ջուր, ագանել կից մորթոյ զֆլանէլս, և 'ի կիր առնուլ զամենայն միջոցս 'ի կազ-

դուրել զսրտաշնչութիւն մարմնոյն ։

Իսկ յորժամ որովայնալուծութիւնն պատճառի 'ի չուայտութենէ կամ 'ի խմորմանէ ստամոքսաց, պարտ է տալ հիւանդին փսխողական դեղս. զի փսխումն ոչ միայն մաքրէ զստամոքսն, այլ և 'ի դուրս վարէ զմնացական կղկղանս. ուստի տալ նմա կէս դրամ փոշի իպիկակուանայ բաւական է. և զկնի մի կամ երկու աւուրց հարկ է տալ հիւանդին սակաւ ինչ ռուբարբ՝ խաշնդեղ, որ եթէ դեռ տեւէ, պարտ է կրկնել զերկոսին դեղսն եւս ։

Կերակուր նորա պարտ է լինիլ թեթեւ, դիւրամարս և փոքր, այսինքն սագու, արարուտ և մեղմ դալարիք եփեալ կաթամբ և խիւս բրնձոյ. իսկ ըմպելիք նորա եփեալ գարեջուր, չեճուկ կաթին, թոյլ ջուր փոխնդի, մաքուր ցուրտ ջուր, և այլն ։

Զի եթէ որովայնալուծութիւնն պատճառեսցի 'ի խափանեալ ինչ սովորական արտաթորմանէ, պարտ է արիւն առնուլ, կամ ջանալ 'ի կիր առնուլ զամենայն միջոցս դարձուցանել անդրէն 'ի սովորական արտաթորումն, եթէ լիցէ այն թութք և եթէ գաշտան, յայլ ինչ, զի կեանք հիւանդին կախի զնմանէ ։

Կանոնաւոր կամ սովորական որովայնալուծութիւնն, որ ոմանց սովալէ յաւուրն երկիցս կամ երիցս, չէ պարտ բնաւ արգելուլ. գոլով այնր ճիգն բնութեան 'ի բաց վարել զվնասակար թարախս մարմնոյ, զոր 'ի խափանելն՝ գուցէ պատճառեսցէ զայլ մահաբեր հիւանդութիւն ։

Որովայնալուծութիւնն պատճառեալ 'ի սաստիկ վշտաց կամ 'ի տարտամութենէ թաղծեալ մտաց, զգուշասցի տալ հիւանդին լուծողական կամ փսխողական դեղս, այլ պատշաճ դեղ այսպիսի հիւանդութեան է լաւ-

digitised by A.R.A.R.@

ղանիւմ, յորժամ պարտ է հիւանդին առնուլ 10 կամ 12 կաթիլս ընդ վալերեան թէյ յութն կամ 'ի տասն ժամս անգամ մի. և պահել զինքն միշտ խաղաղ և անդորր միտք, մտանել միշտ յուրախ միաբանութիւնս և զբօսնուլ 'ի պէսպէս զուարճալի խաղս և 'ի տեսարանս:

Իսկ յորժամ որովայնալուծութիւնն պատճառի 'ի կծու կամ յապականեալ կրաց, պարտ է տալ հիւանդին ըմպել զլուծողական հեղուկս ընդ գեր արգանակի, որ պատճառեսցէ լուծումն և փսխումն: Իսկ եթէ հիւանդըն զգայ բորբոքումն աղեաց, պարտ է արիւն առնուլ, և տալ նմա ըմպել զքանի մի չիթ լուդանիւմ ընդ թոյլ հեղուկաց:

Այլ յորժամ որովայնալուծութիւնն պատճառի 'ի յօդացաւութենէ, պարտ է տալ հիւանդին թեթև բուրարբ և այլ մեղմ դեղ ինչ, և ջանալ քրտնեցուցանել զնա ջերմ հեղուկաւ, և կամ տալ նմա զքանի մի չիթս լուդանիւմ ընդ բաժակ մի գինւոյ:

Որովայնալուծութիւնն պատճառեալ 'ի ձձեաց, որ իմանի 'ի մաղձային լուծմանց, դեղ որոյ է փշի որդանց. այսինքն՝ փորմ պուդր, և ապա թեթև լուծողական, այսինքն բուրարբ և կամօմէլ, կամ կասսիայ:

Որովայնալուծութիւնն պատճառեալ 'ի վատ ջրոյ, պարտ է առժամայն փոխել զջուրն, կամ որ և իցէ հնարիւ բարեխառնել զայն:

Որովայնալուծութիւնն պատճառեալ 'ի նուաղութենէ ստամոքաց հարկ է տալ հիւանդին զզօրան դեղորայս ընդ սպիտակ գինւոյ, կամ նախ քան զճաշելն ըմպել զբաժակ մի պօրտօ կամ ընտիր կարմիր գինի:

Որովայնալուծութիւնն յորժէ և պատճառեալ իցէ, յորժամ հարկաւորի 'ի խափանել, պարտ է ուտելիք հիւանդին լինել օրիզ եփեալ կաթամբ և ցանեալ 'ի վերայ նորա փոքր ինչ ծեծեալ կինամոն, մածոյծ օրիզոյ ընդ փոքր ինչ շաքարի, սագու եփեալ ընդ պօրտօ գինւոյ, թոյլ արարուտ. և ապա խորովեալ միս վառեկի կամ գառան: Ըմպելիք նորա պարտ է լինել թոյլ ջուր փոխնդի, կամ խորովեալ հացի, ջուր եփեալ գարւոյ կամ օրիզոյ, թոյլ արգանակ նիհար մսոյ. և այլն: Իսկ նա, որ 'ի սեփական նուաղութենէ և կամ 'ի կարի գրգռմանէ աղեաց ընդունակ է միշտ այսմ հիւանդութեան, հարկ է նմա կեալ չափաւոր կամ ժուժկալութեամբ կերակրոց և ըմպելեաց, 'ի բաց կալ 'ի խակ պտղոց, 'ի դժուարամարս, աղեալ և ծխեալ մսոց և ձկանց, և այլն:

Նոյնպէս զգուշանալ պարտ է 'ի ցրտութենէ և յայնմ ամենայնէ, որ արգելուլ կարէ զարտաշնչութիւն մարմնոյ, ուստի հարկ է նմա ագանել միշտ զփլանէլս 'ի ներքոյ շապկի:

Նաև հոգել պարտ է ընդդէմ սաստիկ վշտաց, տարտամութեան մըտաց, երկիւղի, բարկութեան, որք կարի վնասակար են այսպիսի հիւանդութեան:

## ԳԼՈՒԽ Ջ.

### Խիճ կամ քար յերիկամունս կամ յերիկամուղիս:

Յորժամ մանր քարինք զետեղեալ իցեն յերիկամունս, որք և երբեմն արձակին միզելով, իմանի՝ զի հիւանդն վտանգի 'ի խճէ երիկամանց. բայց և է զի յայսց քարանց մին մնայ 'ի փամփուշտի առ ժամանակ մի, որ

digitised by A.R.A.R.@

կուտակեալ ընդ այլ նոր Թարախից՝ այնչափ մեծանայ, որոյ անցանել ընդ միջին՝ անհնար լինի, ապա խմանի. զի հիւանդն մեռանայ 'ի քարէ փամփշտի :

Պատճառ :

Հնար է այսր ախտից պատճառիլ 'ի զեղխ կեցութենէ, 'ի յըմպելոյ զօրաւոր և պնդացուցիչ ըմպելիս, 'ի նստողական կենաց, 'ի ննջելոյ միշտ 'ի կարի ջերմ և փափուկ անկողնուոջ և այն միշտ 'ի վերայ Թիկանց, յըմպելոյ ջրոյ խառն ընդ հողային կամ քարային նիւթոց, 'ի պնդիչ կամ քամոտ բընութեամբ կերակրոց, և այլն : Նաև յառաջ գայ 'ի ժառանգական տրամադրութենէ, կամ 'ի զեղխ կեցութենէ ծնողաց, 'ի սաստիկ յօդացաւութենէ և յախտէ պատճառեալ 'ի հարբուղնէ .

Նշանք այսր հիւանդութեան :

Մանր քարինք կամ խիճք յերիկամունս պատճառեն սաստիկ ցաւ ազդեր, հիւանդութիւն և երբեմն արիւնախառն միզումն : Իսկ յորժամ յայսոցիկ քարանց մին իջեալ 'ի միզանցսն և գոլով այնր կարի մեծ ընդ միզելն վարիլ արտաքս, ապա 'ի վեր յիշատակեալ նշանքն սաստկանան, զի ցաւն տարածի 'ի փամփշտին, 'ի զիստն և 'ի բարձ ոտից, Թմրի մշտացեալ տեղին, ամորձիքն քարշին 'ի վեր և արգելու միզումն :

Քար 'ի փամփշտի յայտ գայ 'ի ցաւոցն յառաջ կամ յետ միզելոյն. 'ի միզելն՝ է որ կաԹելով, է որ արձակ և է որ երբեմն յանկարծ կ'ասի. 'ի շարժիլն, 'ի հեծանիլն 'ի ձի, կամ յելանելն 'ի կառս զգայ հիւանդն սաստիկ ցաւ, գոյն միզին լինի սպիտակ խառն ընդ Թանձր և գարշահոտ աղտեղութեան :

(Շարունակութիւն:)

## ՔԱՂՈՒԱԾ ՃԱՌԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՏՕՔՏՈՐ ՄՕՐԹՄԱՆԻ

(Տես Մասիս Թիւ 1196:)

1827 Թուականին Շուլց Գերմանացի հնագէտը Հայաստան ճամբորդութեան ելաւ հոն տեղի հնութիւնները հետազօտելու դիտմամբ : Վան քաղաքը իր հնութեամբը Շուլցին ուշադրութիւնը գրաւեց, յիրաւի 42 հատ սեպաձև արձանագրութիւն գտաւ հոն ու մեծաւ ուշադրութեամբ գաղափարեց զանոնք. իրմէ ետքը շատ ուրիշ հնագէտներ ալ գընացին ու դեռ ուրիշ յիշատակարաններ ալ գտան, որով ընդ ամէնն եղաւ 50 հատ :

Բայց և ոչ մէկը կրցաւ անոնց իմաստը հասկնալ, վասն զի ամէնքն ալ Բաբելական գրութեան համեմատ կը ջանային լուծել զանոնք, ու բան մը չըհասկնալով Թողուցին՝ կարծելով Թէ անծանօթ լեզու մի է այս միայն Հինքս անգղիացին “ատէ” բառը գտաւ որ հայերէն “ատէ” բառին կը համապատասխանէ. բայց անկէց առաջ չկրցաւ երԹալ:

Տ. Մօրթման իմաստասիրելով Թէ՝ այս արձանագրութիւնները հայերէն կրնան ըլլալ, այս ենԹադրութեամբ հայ լեզուն սորվեցաւ ու մէկէն մեծ օգնութիւն մը գտաւ արձանագրութեանց իմաստը գուշակելու: Յետոյ

digitised by A.R.A.R.@

ուրիշ գրութեանց այլ և այլ գիտութիւններովը՝ ինչպէս են "Յայտարարք և Գաղափարիչք" կոչուած տաղերը, անոնց էական իմաստը մեկնել սկսաւ։ Հայկական գրութիւնը Տանեբանեան գրութեան երրորդ ճիւղն է, այսինքն առաջինն է՝ Շօշական. երկրորդ՝ Բաբելական և Նինուէական, երրորդ՝ Հայկական։ Առաջինը 120 նշանակագիր կը պարունակէ. երկրորդը 6_700. երրորդը՝ այսինքն Հայկականը 120_130։ Արձանագրութեանց ժամանակը Քրիստոսէ 750_800 տարի առաջ է, և հինգ թագաւորաց կը վերաբերին, Ա. Պակրիտուր, Բ. Իշպուհինի, Գ. Մինուաս, Դ. Արգիշտիս, Ե. Պակրիտուր Բ.

Առջի երկու թագաւորաց քիչ արձանագրութիւն կայ նուիրուած, բայց Իշպուհինիին արձանագրութիւններէն մէկը խիստ կարևոր է. վասն զի մանաւոր ցանկ մը կուտայ դից և այլն։ Առջի երկու թագաւորները մեծ պատերազմներ չըրին, սակայն զՀայաստանը բարեկարգեցին։ Մինուաս բաւական մեծ պատերազմներ ըրաւ ու մինչև 'ի Նալու' 'ի Վերին Եփրատ հասաւ։ Արգիշտիս Վանայ միջնաբերդը շինեց և մանաւոր յիշատակարանաւ կ'ըսէ թէ "Ես ինքն կառուցի զմիջնաբերդն". ասով կ'իմանամք թէ Շամիրամ չէ եղեր այս բերդին հիմնադիրը։

Արգիշտիս մեծ պատերազմներ ըրաւ Ասորւոց դէմ, անոնց գունդերը ջարդեց ու ցրուեց և անոնց շատ գաւառներուն տիրեց։ Անկէց Վասպուրական աշխարհ մտաւ, ուր տեղի ապստամբութիւնները նուաճեց, բերդերը գրաւեց ու զՀայաստանը շատ ընդարձակեց. վերջապէս Պակրիտուր Բ. շատ մեծ աշխարհակալութիւններ ըրաւ, և ահա այս է որ Բաբելացւոց դէմ պատերազմեցաւ, յաղթահարեց անոնց և բազում ընդարձակեց իւր տէրութիւնը։ Եզեկիէլի մարգարէութեանց մէջ (Գլ. ԼԸ. Գլ. ԼԹ) Գոգ և Մագոգ մեր Պակրիտուրն է որ բոլոր արևելքի բազդը գրեթէ իր ձեռքը անցուցած էր։ Տէրութեան անունը Պիամա կը կոչուէր, իսկ մայրաքաղաքը Տոսբ, ինչպէս որ Խորենացին ալ Տոսբ կը կոչէ զՎան քաղաքը։ Թագաւորաց տիտղոսներն են՝ "Թագաւոր թագաւորաց, հզօր թագաւոր, շնորհալի թագաւոր, թագաւոր շքեղ քաղաքին Տոսբայ"։

Արգիշտիս՝ իր պատերազմներուն մէկուն մէջ առած գերիներուն ու աւարներուն ցանկը կուտայ.

52665 զինուոր, 10170 ազատ մարդ. 23200 կանայք, 1104 երիվար. 35016 եզ. 11823 ոչխար։ Նոյնպէս Պակրիտուր Բ. ցանկ մը կուտայ գերիներու. 46600 կանայք. 12000 տղայք. սպաննած մարդիկներուն թիւը 12735. կորուստները 23334 եզ ու 58100 ոչխար և այլն։ Աստուածները զոհերուն կարևորութեանը համեմատ կարգաւ կը հետևին յիշատակարանաց մէջ. 1 Անահիտ. 2 Դիրապաս. 3 Փառ. 4 Արտուարտաս, 5ը (ընջեալ է) 6 Խրձվամա, 7 Խութինի. 8 Աևա կամ Վա. 9 Վաթի. 10 Իպիփա. 11 Արսիմիդ. 12 Ըիմա, և այլն և այլն մինչև 60_65։

Ասոնց 84 ողջակէզ՝ կամ զոհ եղած է ըստ արձանագրութեանց իմաստին. ամենէն կարևոր զոհ ուղտն է, որ միանգամ կը զոհուի եղեր։

Ընդհանրապէս այս արձանագրութեանց լեզուն Զենդ (Զրադաշտական) և Սանսկրիտ տարբերքով խառն է. և այս ալ բնական է, վասն զի այս երկու լեզուներն հայ լեզուին գրեթէ հիմը կը կազմեն։ Սակայն շատ բառեր

digitised by A.R.A.R.@

ալ կամ այս յիշատակարանաց մէջ՝ ուրոց միայն հնչմունքն ուղղելով բուն հայ կերպարանքը կ'գտնենուն: Մեծ խնդիր մ'ալ այս է թէ 2800 տարի առաջ բուն խակ հայ բառերը ինչ հնչում ունէին: Ընթերցողին թողլով այս բանասիրական խնդիրը, կը փութամք հոս արձանագրութեանց բառերուն մէկ քանի հատը յիշել.

| | |
|---|---|
| Պարի | Պերի |
| Ուրու | Ուր (յարաբ. դերա) |
| Ուրիի | Իւր |
| Շինիտացի | Շինեցի (եւսու չինել) |
| Առն | Առն |
| Տանիմի | Տան իմոյ |
| Վրա | Վերայ |
| Խալդիտան | Ըպատան |
| Շիու | Ջուել |
| Հուս | Հիսել (գործել չինել) |
| Արման | Հրաման |
| Աշիղ | Աս |

Տարակոյս չմնար որ Հայաստան Հայկազանց ժամանակը Հայաստան չէր կոչուեր, ինչպէս որ այս արձանագրութիւններն ալ կը վկայեն թէ՝ Հայաստանի մէջ քանի մը ուրիշ ազգութիւններ ալ կային, բայց ընդ իշխանութեամբ միոյ թագաւորի: Ըստ յիշատակարանաց, Պիամա կը կոչուէր մեր բնիկ երկիրը և ոչ թէ Հայաստան կամ Արմենիստան. ինչո՞ւ ուրեմն Պիամայի փառքը Հայաստանէն դուրս հանարինք . . . . :

## ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

### Ա— Եկեղեցական Օրագիր,
### (Թիւ 665):

Կարդացինք ձեր յօդուածը, զոր կը գրէք ՍԻՕՆԻ «Միութիւն կաթողիկոսութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ» միջնորդով խորհրդածութեան դէմ: Կը ցաւիմք, որ ՍԻՕՆԻ յօդուածոյն ամբողջ պարունակութիւնն անտեսութեան տալով և միակողմանի կերպիւ դատելով՝ գայթակղած էք միամտաբար: Դուք մի կաթողիկոս կ'ընդունիք, բայց Եկեղեցւոյ քահանայութիւնը, եպիսկոպոսութիւնը, ժողովրդական մարմինը, դաւանութիւնը և ծիսակատարութիւնքը կը բաժնէք, այսինքն տարբերութիւն կը տեսնէք Էջմիածնի և Սսոյ եպիսկոպոսութեան, նոյն եպիսկոպոսութեամբ ձեռնադրուած քահանայութեան, նոյն քահանայութեամբ մատակարարուած խորհրդոց և հետեւապէս նոյն խորհուրդներով ծնած, սնած և զարգացած ժողովրդական մարմնոյն, այսինքն հաւատացելոց միութեան մէջ: ՍԻՕՆ երկու կամ երեք կաթողիկոսներ կ'ընդունի, բայց ամենևին չբաժներ կաթողիկոսութիւնը, եպիսկոպոսութիւնը, քահանայութիւնը, դաւանութիւնն, արարողութիւնքն և հետեւապէս Եկեղեցւոյ կամ հաւատացելոց միութիւնը, ինչպէս և նոյն իսկ հաւատացեալք բնաւ երբէք չեն բաժնուած, չեն խորթած և չեն պառակտած ՚ի դարաւոր ժամանակաց հետէ: Ընթերցողաց թողունք դատել ՍԻՕՆԻ և ձեր նայուածքն կաթողիկոսութեան խնդրոյն նկատմամբ, թէ ո՞րն օգտակար է և ո՞րն վնասակար և անցնինք ուրիշ առարկութեան:

Դուք կաթողիկոսութիւնը՝ նախագահութիւն մեկնելով կը հետեւցնէք, որ մի և նոյն ժամանակ երկու կամ երեք նախագահներ կարող չեն լինիր: Ուրախ եմք, որ Եկեղեցւոյն մի Գլուխ ընդունելով, որ է Յիսուս Քրիստոս, կաթողիկոսները՝ գլուխներ չէք համարիր, այլ թէ ոչ հռովմէադաւանից նման անշուշտ պիտի պըն-

digitised by A.R.A.R.@

գէնք թէ՝ մի մարմնոյն երկու կամ երեք գլուխներ կարող չեն լինիր)։ Բայց ներեցէք մեզ ասել, որ նախագահութեան նկատմամբ թէ ՍԻՈՆ և թէ Արեւմտեան Ազգային Ժողովին բնաւ երբէք ուրացած չեն Էջմիածնի կաթողիկոսի նախագահութիւնն։ Այն որ ընդհանուր կաթողիկոսի անուն կը կրէ, հարկաւ, եթէ երբ և իցէ ընդհանուր եկեղեցական–ազգային ժողով գումարուի (որուն այժմ ամենեւին պէտք չը կայ) նախագահն կամ նախաթոռն ինքն է։ Հետեւապէս, Եկեղեցւոյ և Ազգի միութեան փափաքողներն նախագահութիւնն չէ, որ կը մերժեն, այլ հակաթոռութիւնն։ Վասն զի հակաթոռութեան գաղափարն բաժանում և երկպառակութիւն կ՚ենթադրէ Եկեղեցւոյ զաւակաց և իրենց դաւանած հաւատալեաց մէջ, որ բարեբաղդաբար մինչեւ ցարդ տեղի ունեցած չէ. իսկ եթէ այսուհետեւ լինին մարդիկ, որ [illegible], [illegible] գոչելով պղտորեն Եկեղեցւոյ զաւակաց մտքերն, և հակաթոռութենէն [illegible] և [illegible] արտադրելով երկպառակեն Ազգային հոգեւոր միութիւնը, անշուշտ սեւագիր այն օր դրոշմուին իրենց անուններն պատմութեան մէջ, զոր և դուք Առ. [illegible], ձեր անկողմնութեան հակառակ, անշուշտ [illegible] [illegible], ձեր կարծեցեալ [illegible] [illegible] զինի։ Բայց գիտէք հարկաւ, թէ ինչ կերպով կը կարդացուին խռովութեան որոմնացաններու և երկպառակիչներու անունները պատմութեան մէջ։

Դուք, ըստ ձեր համոզման, տրամաբանութեան սիրահար լինելով և ՍԻՈՆԻ քարոզած աւետարանական բանիբուններու մէջ բաղդակտնութիւն երազելով կը խօսիք Ս. Գրոքէն, և ձեր տրամաբանութեամբն լուծել կամիք ամեն խնդիր։ Բայց շատ մի վստահիք ձեր տրամաբանութեան վրայ, այլ, եթէ կ՚ընդունիք մեր խորհուրդը, խոնարհեցէք դէպ ՚ի Աւետարանն, ուսէք և ուսուցէք Աւետարանը. վասն զի ձեր դժուարալոյծ կարծուած խնդիրներն իսկ՝ դիւրաւ կը լուծուին Աւետարանով, ինչպէս և լուծուած են շատ և շատ խնդիրներ, որք բոլորովին անլուծանելի էին տրամաբանութեան համար։ Կը տեսնէք անշուշտ, թէ Պապականութիւնն՝ Աւետարանէն հեռանալով և իշխանասիրութեան ու գահասիրութեան ետանգէն մղուելով, ո՜ր հասաւ և ինչ դատակնիք ընդունեց մարդկութեան լուսամիտ մասէն։ Մի թէ այդ փորձը զգուշութեան մի շահաւէտ խրատ չէ՞ ամենուն համար, որոնք գիտեն օգուտ քաղել ազգաց պատմութենէն։

### Ա.— Փ[illegible]ղէ, Թ.— 708։

ՍԻՈՆ հայհոյած չէ զձեզ, այլ երկուց Արքազան Պատրիարքաց դէմ ձեր անիրաւ ամբաստանութիւնը քննադատելով պատասխանատուութեան ենթարկած է զձեզ։

Դուք պատասխանատուութենէ փախչելու համար՝ կը թողուք մեծաբանութեան ասպարէն, որ էր, ըստ ձեր անհեթեթ զրախօսութեան [illegible] [illegible] [illegible] և բոլորովին նոր երազներ երազելով, կը խօսիք Արուսաղէմի կանոնադրութեան, ժողովոց կազմութեան և



digitised by A.R.A.R.@

պարատուց վրայ ։ Բայց մի կարծէք թէ Սիօն դիւրաւ կը թողու զձեզ, որ այդպէս, քնաշրջիկի նման անգիտաբար թափառիք, առանց գիտնալու՝ թէ ու՛ր էիք և ու՛ր հասաք ։ Կը յիշեցնենք ձեզ վերստին ձեր 699 թուով հրատարակած ամբաստանութիւնը և կը պահանջենք որ սթափիք և պատասխանէք մեզ՝ թէ ե՞րբ և ինչպէս դաշնակից եղած են երկու պատրիարքներն Ս․ Գերեզմանի ազգայիններն բարոյապէս թաղելու համար ։ Ե՞րբ և ինչպէս թղթակից եղած են նոյն վիճակի դպրոցներն և եկեղեցիներն գոցելու համար ։ Ի՞նչ հիմամբ կ՚ամբաստանէք նաև Երուսաղէմի համօրէն Միաբանութիւնն իբրև անարժան առաջնորդութեան ։ Կը պահանջենք և խստիւ կը պահանջենք, որ կամ փաստերով հաստատէք և կամ հրապարակաւ յետս կը կոչէք ձեր այս յանդուգն զրպարտութիւնն ։ Եթէ դարձեալ փախուստ տաք, որ խիստ հաւանական է, և մի այլ առարկայ ձեռք առնուք, իմացած լենիք կանխաւ, որ Սիօնէն միշտ կընդունիք ՍԱՌՆ ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔ, որ ամեն ստաքորող և զրախօս թերթերու արդար պատիժն է ։ Իսկ եթէ զիջանիք հարցնելու՝ թէ ինչո՞ւ կ՚արհամարհուիք և անարժան կը դատուիք, Սիօն չը զլանար հիմնաւոր փաստերով պատասխանել ձեր հեղինակ գրողերուն, որով բարիք մը եւս բրած կը լինի թէ ձեզ և թէ այն պարզամիտներուն, որոնք գուցէ կը գայթակղին ձեր հըրատարակութեամբ ։

# ՀԱՆԴԷՍ ՏԱՐԵԴԱՐՁԻ

## ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ Ս․ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵՒ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ Ս․ ԱԹՈՌՈՑՍ

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ տօնախմբութիւնը կրօնական շքեղ հանդիսիւ տօնուելէն յետոյ, նոցա անմահ յիշատակին և միանգամայն Ժառանգաւորաց Վարժարանի Տարեդարձին առթիւ, փայլուն հանդէս մի եւս կատարուեցաւ Վարժարանի մէջ, դպրոցական վեցամսեայ մանաւանդ որ հարցաքննութենէն զկնի ։ Այն հանդիսին ներկայ էին Ամեն․ Սրբազան Պատրիարքն, Միաբանական Ուխտին Գեր․ Հարք և Եղբարք և համօրէն Ուխտաւորք՝ արք և կանայք․ Հանդիսին մէջ ատենախօսեցին ուսուցչաց դասէն Աւագ Սարկաւագ Գաբրիէլ Խապայեան, իսկ աշակերտաց մէջէն՝ Գէորգ Տ․ Յարութիւնեան Խամսէլցի, Թադէոս Գրիգորեան Անդրիանուպօլսեցի ։ Գաղղիարէն եւս կարդացուեցան մի ճառ և քանի մի առարկներ, ինչպէս և կատարուեցան երկու հայերէն տրամախօսական հանդէսաւոր արարուածներ, զորս շարադրած էին աշակերտներէն՝ Պօղոս Յակոբեան և Կարապետ Թովմասեան Զանազ — Գաղեցիք ։ Հանդէսն կնքուեցաւ յորդորական բանիւ և օրհնութեամբ Ամեն․ Սրբազան Պատրիարքին ։

Արժան կը համարինք հրատարակութեամբ հաղորդել ընթերցողաց Բարեշնորհ Գաբրիէլ Աւագ Սարկաւագի Ատենախօսութիւնն, որ է հետեւեալն ։

digitised by A.R.A.R.@

## ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ ԵՒ ՄԽԻԹԱՐՈՑ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

Ձեր հանդիսաւոր համախմբութիւնը կը թելադրէ զիս մի քանի խօսք արտասանել Հայաստանեայց Եկեղեցւոյ այսօրուան յիշատակած Վարդանանց նահատակութեան առթիւ ։

Երբ հինգերորդ դարու ազգային պատմութեան վրայ ակնարկ մը ձգենք , ի՞նչ պիտի տեսնենք . — Ճշմարիտ հայրենեաց ազատասէր խումբ մը՝ որ ՚ի սէր հայրենեաց , ՚ի սէր Կրօնի և Եկեղեցւոյ սատանեան մոլեկրօնութեան դէմ կը ելնի . կը շահատակուի և կը նահատակուի ։ Պիտի տեսնենք խումբ մը որ ՚ի սէր Աւետարանի և ճշմարտութեան կամաւ ՚ի բոցանդ կը վառի ։ Ի՞նչ պսակուցիչ և միանգամայն սրտագրաւ տեսարան ։ Արդարեւ պսակուցիչ և ահազդեցիկ է արեան և նախճիրներու տեսարանը ։ Արդարեւ սարսափ և երկիւղ կ'ազդէ ամեն ողջախոհ սրտերու աշխարհաւէր պատերազմի գոչիւնն ու գոռում մը . սակայն հարկ է գիտնալ՝ որ ամեն պատերազմ միեւ նոյն յատկանիշը չ'ունի . ամեն պատերազմ աշխարհաւէր և կործանարար չէ , այլ կայ պատերազմ՝ որ աշխարհակեցոյց է , և կայ՝ որ սրտագրաւ է . այս իսկ է Գողգոթայի Նահատակին հրատարակած պատերազմը ։

Վարդանանց խումբը այս պատերազմին էր՝ որ պատերազմեցաւ . սակայն բնաւ չը նմանիր աշխարհի իշխանաց և գահակալաց մղած պատերազմներուն , որոց նպատակը ոչ այլ ինչ է , բայց եթէ փառք , ճոխութիւն եւ աշխարհակալութիւն . որոց նպատակն է մէկուն անկումը եւ միւսին կանգնումը, մինչդեռ առաջինոյն նպատակը միմիայն ճշմարտութեան կանգնումն ու յաղթանակն է . և այս պատերազմին համար էր՝ որ ըսի թէ կայ պատերազմ, որ աշխարհակեցոյց եւ սրտագրաւ է ։ Վարդանանք՝ ճշմարտութեան սիրով՝ երկնային սիրով, որ «Մեծ է քան զամենայն մեծութիւն երկրաւոր , և այնպէս աներկիւղ առնէ զմարդիկ իբրեւ զանմարմին զօրս հրեշտակաց[1] », այս սիրով բորբոքած իրենց կենօք պաշտպանեցին Հայրենիքը պարսից գիւաշանչ բռնութիւններէն , պաշտպանեցին զԵկեղեցին և զԱւետարանը Զրադաշտական փայբազ մոլեկրօնութիւններէն, աներկիւղութեամբ քար ու քանդ ըրին հրոյ բագինները , ատրուշանները և մեհեանները ։ Նոյնպէս նման ճշմարտութեան սուրբ նախանձով վառուած անշունչ կռոց պաշտօնեաները ՚ի սուր սուսերի մաշեցին և նոցա պաշտամունքը Հայաստանէն իսպառ ջնջեցին , իրենց հրեշտակային աներկիւղութեամբ ճշմարտութեան ոսոխիմ թշնամի Յազկերտն և իւր մեծամեծներն ահաբեկեցին ։

Ահա այս քաջ և արի նահատակաց նուիրական յիշատակն է , զոր կը պատուենք . նոցա անմահ յիշատակին համար է , որ այս տեղ համախմբուած ենք ։ Ս. Հայր և Մխիթարեան Հանդիսականք , այս՝ սրբազան պարտք մ'է զոր կը կատարենք . բայց ներեցէք ինձ ըսել , որ ամեն պարտականութիւն իւր պարագաները ունի , և անոնցմով է՝ որ կըլլայ պարտականութիւն և առանց անոնց ոչինչ է ։ Այսպէս եւս սոյն Հանդէսը եթէ առանց նշանակութեան իբրեւ սովորութիւն կը կատարենք , բնաւ չը կարծենք՝ որ պարտք մը կատարած կըլլանք առաւ-

---

(1) Եղիշէ Ե. յեղ. Յարձակումն Արեւելեայց.

digitised by A.R.A.R.@

քան լոյս․ այլ ազգային ամեն անհատ պէտք է օգուտ մը քաղէ․ դաս մը առնէ այս Հանդեսէն․ պէտք է հետազօտ է, հարցնէ իւրովի, թէ՝ ինչու համար՝ ամբողջ 13 դար Վարդանանց աճիւնի վրայէն անցնելէն յետոյ, այսօր՝ տակաւին նոցա յիշատակը, նոցա անունը ամեն երախտագէտ Հայ սրտերու մէջ անջինջ և անմահ մնացեր է․ Երբ այս հարցասիրութիւնները ըլլան, քաղցր է ինձ յուսալ՝ որ Հանդիսին նշանակութիւնը այն ատեն պիտի իմացուի․ այն ատեն ամեն ոք պիտի խելամտէ՝ որ ճշմարտութեան և Եկեղեցւոյ համար իրենց անձը զոհողներուն յիշատակը և անունը դարուց 'ի դարս անմահ պիտի մնայ․ այսպէս և կը հաւատար Վարդան իսկ, իւր հաւատարիմ նիզակակցաց ասելով՝ "Պարծանս անձանց ժառանգեցուք և զքաջ անուն ազգատոհմին մերոյ թողցուք Եկեղեցւոյ (1)"։

Այս Հանդէսը խոկալէս կշտամբանք մը պէտք է սեպենք անոնց, որք անձնասիրութեամբ մոլցած են իրենց պարտքը՝ որ առ Աստուած, առ ընտանիս կամ առ Հայրենիս և առ ընկերն, և ճշմարիտ քաջալեր մը անոնց, որք Վարդանանց հոգւով իրենց եղբարց, Հայրենեաց, Ճշմարտութեան և Աստուծոյ համար իբրեւ պատարագ միշտ կը ճենճերին, որք իբրեւ նուիրական և աստուածահաճոյ խունկ 'ի հոտ անուշից կը համբառնան յերկինս 'ի վեր։

Թերեւս առարկուի ինձ թէ՝ չը կայ այժմ այն պատեհութիւնը, որով Վարդանանք պարծանս անձանց ժառանգեցին և որով այսօր նոցա յիշատակը իբրեւ յիշատակ արդարոց օրհնութեամբ կը հռչակուի․ Թէ չը կայ այսօր Հայաստանը կռուան ասից ընող անօրէն Յազկերտներ և զՀայերն 'ի գերութիւն վարող ոչ մէկ բռնաւոր․ չը կան Հայաստանի մէջ ատրուշաններ հաստատող մոգեր և մոգպետներ, վերջապէս Քրիստոնէութիւնը ջնջելու ոչ մէկ հետամուտ, չը կան սանձմէ ոչ մէկը՝ որ Վարդանանց նման մինչ ցկեանս զինագրաւ լինինք, յաղթենք թէ յաղթուինք պարծանս անձին ժառանգենք․ Տեարք իմ, ես ալ Ձեզ հետ միասին մը համակարծիք եմ, իրօք այսօր չունինք ոչ մէկ մասին յայտնի թշնամի մը․ այսօր արձակ համարձակ կը պաշտենք մեր կրօնքը և 'ի խաղաղութեան կը վայելենք․ Բայց եթէ անխաբ խղճիւ նկատենք, ինքնին պիտի վկայենք, որ այս ամեն առարկութիւնները մեր խիղճը քնացնելու ունայն ջանքեր և պատրուակներ են․ եթէ ամեն պատրուակ մէկ կողմ դնենք, մերկապարանոց պիտի տեսնենք․ որ 'ի խաղաղութեան չենք, իրազեկ պիտի լինինք՝ որ Քրիստոնէութիւնը, ճշմարիտ Քրիստոնէութիւնը խնդրելու հետամուտները միշտ անպակաս են․ պիտի տեսնենք՝ որ քրիստոնեայ աշխարհը ինչպէս իւր սկզբնաւորութեան, նոյնպէս այսօր մի և նոյն և աւելի վտանգաւոր տառապանաց և հալածանաց մէջ է։ Այն զի մինչդեռ առաջ Քրիստոնէութեան թշնամին արտաքին էր, որ վնաս մը չը կրնալ ընելէն զատ, եւս քան զեւս նորա հիմունքը կը հաստատէր եւ կամրապնդէր, իսկ այսօր ներքին է, որ 'ի հիմանց զայն կը խարխլէ․

Վարդանանց պատերազմը, ինչպէս ըսի, զահի և աշխարհակալութեան պատերազմ չէր, որ իւր սկիզբն ու վախճանը նոյն ըլլար, երկնից երկար երեւցող հաղորդաւոր տաւ-

(1) Եղիշէ Ե․ Յեղ․ [illegible]

digitised by A.R.A.R.@

ներուն (1) որք իրենց ծագման մէջ կ'աներեւութանան. այլ Ճշմարտութեան, Քրիստոնէութեան և Աւետարանի մէն մի սկզբանց պատերազմն էր, զոր Յիսուս սկսաւ և որոյ շարունակութիւնը իւր ճշմարիտ հետեւողաց կտակեց։ Ուրեմն քանի՛ որ երկրիս վըրայ Քրիստոնէութիւն կայ. քանի որ Ճշմարտութիւն կայ, այս պատերազմը ոչ երբեք պիտի դադարի և միշտ Վարդանանց նման ընտիր նահատակներու կը կարօտի, որ Ճշմարտութեան կողմը բարձրացնելու համար առանց զանգիտելոյ "Ոչ ինչ խնայեն ոչ 'ի մահ անձանց կամ յափշտակութիւն ընչից, կամ 'ի խողխողումն ուրբելեաց, կամ 'ի գերութիւն ընտանեաց եղանել 'ի հայրենի երկրէն եւ անկանել 'ի ստրկութիւն յօտարութեան" (2)։ Պէտք է ուրեմն, Տեարք իմ. Վարդանանց հոգւով վառուած Ճշմարտութեան համար՝ ստութեան դէմ, Քրիստոնէութեան համար՝ մոլորութեան, հերձուածոց և աւերըգապաշտութեանց դէմ, միութեան համար՝ անմիաբանութեան դէմ, 'ի մի բան հոգւոյն համար՝ նիւթոյն դէմ պատերազմինք, անդադար պատերազմինք՝ որք Վարդանանց արեամբ ոռոգեալ և ուռճացեալ այգին ոստոքանց կ'առնեն և ճշմարիտ կրօնքը կը ջնջեն։ Այս կը պահանջէ Վարդան և այս կը պահանջեն Վարդանանք։

Երանի այն ազգին, յոր մասնաւորին շահերը, անհատական շահերը ընդհանուրին շահուց առջեւ կը լըռեն, յոր անձնիւր անհատ յօժարու ընդհանուրին կը ջանայ և կը օգնի։ Ասոր հակառակ, վա՜յ, և բիւրիցս վա՜յ այն ազգին, որուն անհատները անձնասիրութեան մոլի կուռքին առջեւ կը ծնրադրեն և զայն կը խնկարկեն, որոյ բառարանին մէջ միութիւն, միաբանութիւն և եղբայրութիւն բառերը նշանակութիւն չունին։ Մինթէ այս անձնապաշտ հոգիներուն երեսէն չէ՞. որ այսօր աշխարհ համայն ցաւոց և վշտաց մէջ կը հեծէ. առանց յիշատակութիւնն իսկ նողկանք եւ սարսափ կ'ազդէ սրտիս, անշուշտ և Ձեր. Տեարք։

Ահաւասիկ կրօնի այս ընտիր նահատակաց Հանգիսէն այս դասերը պէտք է քաղենք, գիտնալով հանդերձ՝ որ նահատակութիւնը միայն արեամբ չըլլար, միայն մահուամբ չըլլար, այլ "բազմադիմի է նահատակութեանդ անուն . . . զոր և մեծ իսկ քան զամենայն զուրբ սէր յաննեդ մնաց գիտեմք (1)"։

Նահատակութիւնը բազմադիմի է։ Նահատակութիւն է յականջս մեծամեծաց Ճշմարտութիւն խօսիլ առանց նոցա թերութիւնները շոյելու և շողոքորթելու։ Նահատակութիւն է ճշմարիտ Քրիստոնէութիւն տարածելու համար՝ կրել ամեն հալածանք ամեն վիշտ և տառապանք, ծաղր և նախատինք։ Նահատակութիւն է Քրիստոսի պարզ կրօնի համար՝ աւելորդապաշտութեանց դէմ պատերազմիլ։ Նահատակութիւն է ձեւոյն տեղ գաղափարը թագաւորեցնել. գրոյն տեղ հոգին։ Նահատակութիւն է և միանգամայն մեծ նահատակութիւն մարդկանց սրտէն նախանձու և ատելութեան ոգին իսպառ խլել և անոր տեղ եղբայրական

(1) Ասուպները ըստ արդի բնագէտներու կարծեաց՝ մեր մթնոլորտէն վեր պտըտող մանր մարմիններ են, որք մեր մթնոլորտին հետ սաստիկ շփուելով լոյս կը հանեն։

(2) Եղիշէ. Ե. Ցեղ. Յորդորակութիւն Ալեւելեայց։

(1) Եղիշէ.

digitised by A.R.A.R.@

տուրք սէր հաստատել։ Երբ նահատակութեան այս մեծ պարտքը կատարենք, այսինքն երբ սիրենք և սիրուինք յանձնենք մնալ, անխտիր միմեանց սիրոյ և եղբայրութեան ձեռք կարկառենք, այն ատեն իրօք և արդեամբ Վարդանանց սուրբ յիշատակը պատուած կը լինինք։

Ես ուրախ եմ. որ պատեհ առիթ ունիմ այսօր սոյն ճշմարտութիւնները այսպիսի բազմախառն հանդիսականաց առջև խօսելու։ Ինչպէս որ Վարդանանց կեանքն ու նահատակութիւնը առանց նպատակի չէր, նոյնպէս և մեր կեանքն ու ջանքն առանց նպատակի պիտի չը լինին։ Վարդանանք Մարդ էին, Հայ էին և Քրիստոնեայ, նոյնպէս ենք և մենք։ Բայց Մարդկութիւն, Հայութիւն և Քրիստոնէութիւն ինչ նպատակ՝ որ ունէին Վարդանանց համար, նոյն պիտի ունենան մեզ համար, որպէս զի և մենք ճշմարիտ մարդ, ճշմարիտ Հայ և ճշմարիտ քրիստոնեայ լինինք։ Այս մեծ նպատակը կատարելապէս ճանաչելու և պաշտպանելու համար՝ մենք իւրաքանչիւրս պէտք է գործ դնենք մեր նիւթական և բարոյական զօրութիւնը, մեր հոգւոյ և մարմնոյ բովանդակ կարողութիւնը, մեր կենաց մէն մի ժամն ու վայրկեանը։ Երբ մենք մեր մեծ նպատակի համար կ'աշխատինք, կը դիւրանան ամեն վիշտք, կը մեղմին ամեն տառապանք կը ստուերանան ամեն հալածանք եւ զրկողութիւնք, կը քաղցրանայ մահն անգամ, և մենք Վարդանանց նման դիւցազուններ կը լինինք։ Նպատակն սուրբ ու բարի նպատակն է, որ մարդը կը զօրացնէ կենաց ասպարիզին մէջ ամեն արգելքներու յաղթելու և անպարտելի դիւցազուն հանդիսանալու։ Եթէ մարդկային ազգի պատմութիւնը ուշի ուշով հետազօտենք, ակներեւ կը տեսնենք, որ ամենէն հզօր մարդիկը, ամենէն անկուն ախոյեաններն, ճշմարտութեան, արդարութեան, եղբայրութեան, գիտութեան և լուսոյ համար մարտնչող մարդիկն են, այն մարդիկն, որոնք իրենց մահէն յետոյ անգամ յաղթանակ կանգնած են իրենց պաշտպանած սուրբ նպատակի և սկզբունքի յաղթական անմահութեամբ։

Ջանանք ուրեմն, Մեծարգոյ Հանդիսականք, ճանաչել մեր Մարդկութեան, Հայութեան և Քրիստոնէութեան կոչումն ու նպատակն և այնպէս գործել, այնպէս ապրիլ աշխարհիս վրայ և այնպէս մեռնիլ։ Ջանանք ապրիլ և մեռնիլ Վարդանանց նման։

Դուք եւս, Քաղանդաւոր Մանուկք, այս հայրենասէր նահատակաց Հանդիսէն դաս ունիք առնելիք. պէտք է նոցա անմահ յիշատակը ՚ի ձեզ զարթուցանէ այնպիսի վեհ զգացումներ, որով ապագային Հայրենեաց նեցուկներ ըլլաք։ Այս մասին ինչպէս ամեն ազգային անհատ, նոյնպէս դուք մեծ պարտաւորութեանց ենթակայ էք, որ Ազգին, Վանուցս Ս. Նախագահին և Պատուարժան Միաբանութեան կողմէն ձեզ տրուած ամենօրեայ խնամքներուն հետ կ'աւանդուի։ Նոքա իրենց որբոց և աշխատանաց փոխարէն ոչինչ չեն պահանջեր ձեզմէ, այլ միայն ձեր յառաջադիմութիւնը ՚ի բարին և ՚ի ճշմարիտն։ Ուրեմն, ջանացէք պատուել նոցա յոյսերը, արդիւնաւորելով ճշմարտասիրութեան եւ ազգասիրութեան ամենօրեայ առած դասերնիդ, վասն զի ինչպէս առանց Նախախնամութեան արարչագործութիւն չըլլար, նոյնպէս առանց արդեան և ա-

digitised by A.R.A.R.@

ւանց գործոյ ազգասիրութիւն եւ ճշմարտասիրութիւն չըլլար, այլ ամենայն կեղծիք ու պատրանք են: Երբեւ լուսոյ եւ գիտութեան զինուորներ, մեծ պարտաւորութիւն ունիք ապագային մօտ կռուելով եւ սրտի առաքինութեամբ պատերազմիլ խաւարի եւ տգիտութեան դէմ, որք իրենց ապականիչ հեղեղներով մեր հայրենիքը ողողած են: Ինչպէս Վարդան 'ի սպաս տիրոջ լռիւ ուսանելով իւր պարտաւորութիւնները, յառս Սահակայ, Աւարայր դաշտին մէջ պատերազմեցաւ, նոյնպէս եւ դուք Ազգային այս մեծ յարկին տակ ուսանելով ձեր ամեն պարտաւորութիւնները, պէտք է պատերազմիք յօգուտ Հայրենեաց եւ Եկեղեցւոյ: Վերջապէս, խօսքս աւելի ընդհանրացնելով, կ'ըսեմ, ամեն Հայ՝ Վարդանանց հետեւով պէտք է սիրէ զՀայրենիս եւ զԵկեղեցին. «Զի սէրն Աստուծոյ մեծ է քան զամենայն մեծութիւն երկրաւոր»:

Գ. Ս. Խապայեան:

# ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Մայիս 8/20 ին Եգիպտոսի փոխօք քաղաքս հասան Մէքլէնպուրկ—Շվէրինի Մեծ. Դուքս Ֆրէտրիկ-Ֆրանց իշխանը եւ իւր ամուսին Մարի Մեծ. Դքսուհին: Նորին Վսեմութեան ծպտեալ կերպիւ ճանապարհորդելնուն՝ ամեն պաշտօնական ընդունելութի մերժեցին: Մայիս 14/26 ին Մեծ. Սրբազան Պատրիարքն այցելութեան երթալով՝ մեծ սիրով ընդունուեցաւ Մեծ. Դքսէն. հետեւեալ օրը 27 ին Մեծ. Դքսուհւոյն ընկերակցութեամբ պատուել բարեհաճեցաւ Ս. Յակոբայ եկեղեցին ու վանքը. ապա Պատրիարքարան ելաւ, ուր խիստ սիրալիր ընդունելութիւն գտնելէ յետոյ, մէկ ու կէս ժամու չափ վանքը պտըտեցաւ: Հրաժարական ողջոյնը տալէն յառաջ խոստացաւ Սրբազան Պատրիարքին յղել իւր՝ եւ Մեծ. Դքսուհւոյն պատկերները 'ի յիշատակ Նորին Վսեմութեան Սրբազան Պատրիարքէն գտած սիրալիր ընդունելութեան, միանգամայն Սրբազան Պատրիարքին պատկերը խնդրելով:

Մայիս 16/28 ին Վսեմ. Դուքսն իւր 50դ տարեդարձը սուրբ քաղաքս կատարեց. նոյն օրը Սրբազան Պատրիարքին խոստացած պատկերը, նաեւ վանուցս մէջ պատրաստուած Երուսաղէմայ տեղական տեսարանց արեւանկարներ, Պուրայ բանուած նկարակերտ կարպետ մը, եւ Հընդկաստանէն եկած զոյգ մը Թէյի գաւաթներ, որոց վրայ Մեծ. Դուքսն ու Դքսուհին 'ի Պատրիարքարան այցելութեան եղած ժամանակնին զմայլած էին, Նորին Վսեմութեան յղեց, որոնք սիրով ընդունելով, Ն. Վսեմ. յատուկ պատգամաւորով իւր շնորհակալութիւնները նորոգեց Սրբազան Պատրիարքին:

Տարեդարձին առթիւ, Վսեմ. Դուքսն խել մը հիւանդանոցաց, դըպրոցաց եւ աղքատաց դրամային առատ պարգեւներ շնորհեց. նաեւ տեղւոյս Կառավարիչ Րէամիլ փաշային, Երուսաղէմայ Գերմանական Կայսերութեան ընդհանուր հիւպատոս Պարոն Ֆոն Ալդընին, Յոպպէի հիւպատոս Պ. Սիմէոն Մուրատ եւ իւր հօրեղբօր որդի եւ տեղւոյս Ռուսիոյ հիւպատոսարանի Թարգման Պ. Սրապիոն Մուրատ Հայազգիներուն Վանդալ

Թագին չքանշաններն պարգեւել բա-րեհաճեցաւ ։ Նոյն երեկոյին ընդհա-նուր հիւպատոսն Պ. Ժոռ Ալպըն մեծ հացկերոյթ մը տուաւ 'ի հիւ-պատոսարան Վսեմ. Դեսպանին եւ Դեսպա-նուհւոյն, իսկ տեղական Կառավարու-թիւնը շքեղ լուսավառութեամբ մը աւուր տօնախմբութիւնը կնքեց ։

Ռուսիոյ — Գաղղիական վերջին պատերազմին ժամանակ Մեծ. Դուք-սը Գերմանական 3դ զօրաբանակին (Լուառի բանակին) հրամանատարն էր ։ Նորին Բարձրութիւնը, Մարտ 1 եւ փետր. 18ին ատեն մեկնեցաւ ցա-մաքաւ Դամասկոս եւ Պէյրութ եր-թալու, ուստի Զմիւռնի եւ Աթէնքի վրայէ Ապրիլ ամսոյն Պոլիս հասնե-լու է ։

—Իտալական Տէրութիւնը ցարդ յատուկ հիւպատոս չունէր քաղաքիս մէջ եւ յունական հիւպատոսութիւնն եւս ընդհատած էր Կրետէի ապըս-տամբութենէն 'ի վեր ։ Ներկայ ամ-սոյս մէջ երկու Տէրութեանց կողմէն կարգուած նոր հիւպատոսներն քա-ղաքս ժամանեցին եւ պատուով ըն-դունուեցան տեղական Կառավա-րութեան կողմէն ։

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ժամանակագրութիւն Տեառն Միքայէլի Ասորւոյ Պատրիարքի հանդերձ 'ի հնագոյն գրչագրէ, յԵրուսաղէմ 'ի տպարանի Սրբոց Յակոբեանց ։

Առաջին անգամ է որ տպագրու-թեամբ լոյս կը տեսնէ Միխայէլի Ա-սորւոյ Ժամանակագրութիւնն ընդարձակ ծանօթութեամբք որ եւ անշուշտ հե-տաքրքրական է ամեն բանասիրաց հա-մար ։

Տպուած է մաքուր թղթի վրայ եւ կը ծախուի թէ Ս. Աթոռոյս գրա-դարանի եւ թէ Կ. Պոլսոյ Երուսա-ղէմատան մէջ, Գին 16 ղահեկան ։

Նոյն հրատարակութեան մէջ կը գտնուի Մեծ. Մէթ Աբգարեանի խնկական լուսանկարէ առնուած վի-մագիր պատկերն, որուն եւ նուիրուած է մատենի տպագրութիւնն այսպէս ։

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՄԵԾԱՀԱՄԲԱՒ ՏԱՆՆ

ԱԲԳԱՐԵԱՆ

ՈՐ Ի ՀՆԴԻԿՍ

ՆՈՒԻՐԷ

ԳԵՐԱՄԵԾԱՐ ԵՒ ԱԶՆՈՒԱԿԱՆ

ՊԱՐՈՆ ՄԷԹ Յ. ԱԲԳԱՐԵԱՑ

ՇՆՈՐՀԱՊԱՐՏ ԵՒ ՅԱՐԳԱԿԱՆ

ԶԳԱՑՄԱՄԲՔ ՈԳՒՈՑ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՑ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՍԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Նոյն այս Ժամանակագրութիւնն Ս. Ա-թոռս տպագրած է նմանապէս տար-բեր գրչագրի վրայ, առանց ընդար-ձակ ծանօթութեանց, բանասիրաց հետաքրքրութեան եւ համեմատութե-ան համար, որ եւ կը ծախուի 'ի Գին 12 ղահեկան ։

digitised by A.R.A.R.@

# ՑԱՆԿ

## ՓԵՏՐՎԱՐ


Տնօրէնութիւն Ազգային Վարչութեան ՚ի մասին կալուածական և Թեմական խնդրոց Եգիպտոսի . 25_32

ՎԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ .— Բորբոք ստամոքսաց .— Պատճառք .— Նշանք սոյն հիւանդութեան. — Զգուշութիւն . — Դեղ . — Կօլէրամօրբըս . — Կարօտութիւն ախորժակի .— Ախտ Թանչից կամ որովայնալուծութեան . — Խիճ կամ քար յերիկամունս կամ յերկուորիս . 32_38

Քաղուած ճառախօսութեան Տօքտոր Մորթմանի . 33_40

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ . — Առ եկեղեցականն Օրագրի և առ Փունջն . 40

Հանդէս տարեդարձի նահատակութեան Ս. Վարդանանց և Ժառանգաւորաց Վարժարանի Ս. Աթոռոյս . — Ատենախօսութիւն . 42_47

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ . 47

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ . 48


---


### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

Ա. Սիօնը ամեն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս ութածալ թղթով .

Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիտիյէ , հանդերձ ճանապարհի ծախքովը կանխիկ վճարելի .

Գ. Զատ տետրակ առնել ուզողը , պէտք է ամեն մէկ տետրին չորս դահեկան վճարէ .


digitised by A.R.A.R.@